45. ՄԱՐԴ ՆԱՆ ՆԱՄԱՐԴ ԱԽՊԵՐՔՅԸ

Ինիս ա, չինիս էրկու ախպեր։ Տրանք մին օր հաց ըն թխես, քյիս ղարիրոթուն։

Քյիս ըն, քյիս, հրղրցրմը տուզնընաս ըն։ Մարդն ըսես ա.— Պեր քու հացտ օտինքյ։

Նամարդըն ըսես ա. — Պեր քու հացտ օտինքյ։

Վերչը մարդ ախպորը հացըն ըն օտրմ, պըրծնում։

Քյիս ըն քյիս, մին էլ ըն տուզնընաս։

Մարդն ըսես ա.—Դե ախպեր, իմ հացըս պրծալ ա, պեր մհենդյ էլ քու հացտ օտինքյ։

Նամարդըն ըսես ա. — Հաց չունիմ. քյրեզ տալի։

Ըտրանք ըստեղ ուրուր անա ճուկվես ըն։ Նամարդը քյիս ա, քյիս, մարդը ետ ա մնաս, հրղրցնեն փուխես ըն։

Մարդը քյիս ա, քյիս, տսնաս ա մին ծմակում. ծոխ ա եր ինիս։ Էտ ծոխեն յրա քյիս ա, տսնաս մին ճեղաց, նի յա մնեես։ Տսնաս ա ճղացպանը մին քյոմրա քարան տված ըտեղ։

Տա կրակ ա ընես, քյոմրան թխցնես, ուտես, ճղացեն մաչին քոն ինիս։

Մին էլ տսնաս ա քըշերեն կեսըմը իրեք հոքյի՝ կյուլը, արշը, աղվեսը նի յըն մընեես ճրեղացը։ Տրանք ըսկսես ըն ուրանց անա թարիփ անելը։

Արշըն ըսես ա.— Մին չինարու տակե օխտը կարաս վրեսկե օնիմ։

Աղվեսն ըսես ա. — Մին պարկ վրեսկե էլ յրես օնիմ։

Կյուլն էլ ըսես ա. — Մին չորանի վխճարներե մաչի, մին սիպտակ վեխճար էլ յրես օնիմ, ընդրա կլոխը վեր կարին կտրին, տանին թաքավերեն տղեն հետե, ընդրա աշկերը կըլիվանա։

Մարդ ախպերը էտ լոխ ըսկընաս ա։ Տրանք, վեր լուսընաս ա, տուս ըն կյաս։ քյինիս։

Մարդ ախպերը տուս ա կյաս տրանց հետան քյինիս ա, տսնաս աղվեսը վրեսկոն պարկերը տուս ա կալալ, թա արև տա։

Մարդ ախպերը փափաղը պրտրտուս ա ընես, յրա պրծնես, Աղվեսը փրխչիս ա։

Մարդ ախպերը վրեսկեն հվքես ա, քյիս չորանեն վխճրներեն հետան։ Քյիս ա տրան քթնիս, յոր ա ունես էտ վրեսկան, ըտրան տաս։

Չորանը վեխճարը տաս չի, ըսես ա. — Խրեգյ ա։

Չորանեն ըսես ա. — Իրեք կյից վրեսկե էլ կտամ։

Չորանը վեխճարը մուրթես ա, մեսը ուտես ըն, կլոխը տաս ա մարդ ախպորը։

Տա էտ կլոխը եր կալած կյաս ա դիրի թաքավերեն տոնը։

Մարդ ախպերը մարթկանց անա հրցնես ա, թա. — Թաքավերեն տոնը վե՞րն ա։

Նշանց ըն տաս, ըսես. — Թաքավերը հի՞նչիտ ա պեթկ։

Մարդըն ըսես ա.— Ցրես քյիս ըմ ընդրա տղեն աշկերը սղրցնիմ։

Տրանք ըսես ըն. — Քյինիլ մի՛, խեղճ ըս, քու կլոխըտ էլ ըն կտրելու, լոխճին կլոխը կտրալ ա, վեր կրեցալ չըն տղեն աշկերը սղրցնին։

Մարդ ախպերը ըսես ա. — Հո՞ւնց անիմ, վեր կարիմ վեչ, թող իմ կլոխս էլ կտրե։

Էտ մարթիքյը թաքավերեն անա հրցնես ըն, վեր. — Ստի մին մարթ ա եկալ, ուզիս ա կյա տղետ աշկերը սղրցնե, թողինքյ կյա, թա՞ չէ։

Թաքավերն ըսես ա. — Թող կյա։

Մարդ ախպերը քյիս ա թաքավերեն տոնը։ Թաքավերըն ըսես ա. — Դե վեր եկալ ըս սղրցնելի, մին պեն ասիմ, վեր սղրցնիս թաքավերոթունիս կեսը քյրեզ ըմ տլական, թա չէ, կլոխտ կարլական ըմ։

Մարդն ըսես ա. — Լավ, մինակ մին պեն, տղատ իրեք օր մեռած ա մննական։

Թաքավերն ըսես ա. — Վեչինչ։

Մարդը տհենց էլ ընես ա։

Իրեք օր թաքավերեն տղան մեռած ա մնաս, իրեքինչի օրը

յավաշ-յավաշ եր ա կնաս, աշկերը պնաս, հորն ըսես. — Ըրեվուտ աշխարքը մըդամ ըստի յա՞ իլալ, յըես խե՞ ինդի ըմ իլալ։

Թաքավերն ստըեղ մարդին ըսես ա. — Թաքավերոթունիս կեսը քյըեղ ըմ տաս։

Մարդն ըսես ա. — Ուղիս չըմ, տու մինակ ինձ օխտը ճորե, օխտը քյանդիր տո, վեչ մին պեն ուղիս չըմ քյըզանա։

Թաքավերը էտ լոխ տաս ա ըտրան։

Մարդը էտ լոխ յոր ա ունես քյիս աղվեսին չինարուն տակը։ Թաքավերեն նոքյարներեն նհետ չինարուն տակեն քարը պարան ըն տաս, աղվեսեն վրեսկեն պըռնես էտ օխտը ճորուն, քյիս։ Քյիս ըն հըղրցումը տսնաս մին մարթ հաց ա ուզիս։ Ուրան ախպերն ա ինիս։

Կյաս ա հետան հանես, տսնաս վեր ախպերն ա։ Ըսես ա. — Ախպեր, հո՞ մց ըս, մին պեն տնես ըս, թա չէ։

Ըսես ա.— Չէ, լհա հարուր մանեթ ըմ աշխադանք ըրալ։

Նամարդը վեր տսնաս ա մարդ ախպորը ճըրոտենքյը, ըսես ա. — Ախպեր, պա էտ, շտղան ա՞։

Մարդն ըսես ա, վեր իստի, իստի տրեղան։ Ըտեղ նամարդ ախպերը հարուր մանեթը տաս ա մարդին, թա տար տո մերունցը, թող յոլա քյինին, յըես էլ ետ տեռնամ քյինիմ էտ ճըեղացը։ Մարդ ախպերը էտ օխտը ճորեն յոր ա ունես կյաս ուրանց տոն։ Նամարդը քյիս ա, քյիս, էտ ծմակումը ճղացեն ա հըսնես։ Նի յա մըննես մաչը, քշերը մնաս։

Տու մի ասիլ էլա էտ իրեք հոքյին կյաս ըն, նի մըննես ճեղացը։ Տրանք սկսես ըն պտմես, վեր տրանց վրեսկան տարալ ըն, վեխճարեն կլորը տարալ ըն։ Տրանք իտի խոսելիս տեղը աղվեսը եր ա կնաս ըսկսես ճեղացը շոռ կյալը։

Շոռ ա կյաս, ըստեղ-ընդեղ եշիս, եշի՞ս, ախրը պըցրընաս ա, վրեննը տնիս տաղտին յրան, տսնաս մին մարթ ըտեղ։ Էն էրկուսին ըսես ա. — Այ ախպերքյ, մեր դուշմանը քըթալ ըմ, էն ա ըստեղ։

Տրանք եր ըն կնաս նամարդ ախպորը ըտըղան տուս ունես, մաչան էրկու կես ընես։